

« Այլ և նշոյն գազանն գործակից լինէր մարգարէին պահաւոր և աղաքաբոյր. զի զայն երես աւուրս ոչինչ շաշակէր, և պատրաստէր զյեզոնն՝ փոխ տալ մարգարէին յաղաքելն. զի բան մարգարէին իբրև կտնդայ(ոց) բախէր զյեզոն կիտոսին և իբրև զքնար ձնլեցոցսանէր զաղի ազետս ողորոյն առ Աստուած... և մարգարէանայ զվերաբերելն իւր ի խորոց անդնդոց, և ի միջոյ ժանեանց ի վեր կորզիլ՝ աստուածային անյաղորդաբերանքն »:

զիւրին էր նմա մարմնոյն լինել... և շոքոր հոսելով զերկրաւ՝ ոչ ժովացոյց զցամաք »:

« Արդ, վասն զի մարգարէն՝ ձեռով ի կիտոսին պահնցեալ լինէր. և գործով յարոյն Աստուծոյ պահպանեցեալ լինէր, աղօրս ի կիտոսին առնէ... և զքերան գազանին յաղօրս ի վար առնու: Եւ էր տեսանել պանելիչ նորագործ քաւիտոս եղեպ յաղազս փրկութեան մարգարէին և կիտոսն զքերանն երաց յեղս աղօրակերոսքեան, և զլեզուն փոխ տոնեալ ի բանից քարաքան, զորեւ գործոյ երաժշտականի յարունս. տագնտէն նոսազ մատին ի մարգարէէն քաւեցեալ »:

Հ. Բ. Ս.

## Հ Ա Ն Ք

ՅԻ ԻՐԵՆԵ ՍՏՈՒԳԱՐԱՆՈՒԹԻՒՆՆ

(Շար. տես յէջ 16)

## Արիւնակուն

ԱՐԻՍՏԱՆԵՐ ռուսացական բառ մ'է, որ Հ. Մէնէվիշեանի Հանգարանութեան մէջ սեփականուած է կարմրագոյն ազնիւ մարմարին մը. գղ. կը կոչուի Griotte de Languedoc, կամ պարզ, Griotte, որուն Հ. Քալուսի Քալաքար [բալի = վիշնէ գունով քար] առելի ընտիր և ներդաշնակ անունը սեփականեմ է:

## Արծաթ

Յետ ոսկւոյ ամենէն յարգի և ազնիւ հանքն համարուած է: Մեր օտարէն փոխառեալ ռուսացական բառերէն մին ալ Արծաթն է, բայց թէ որ ազգէն փոխառեալ կամ տառադարձեալ է, վճռելն դժուարին է, եթէ ոչ հմտագունից՝ զոնէ ինչ համար: Մոյն բառը զանազան ազգաց մէջ՝ յոմանս նոյնաձայն և յայլ տարաձայն յորոգումն ունի. զոր օրինակ, անգղ. Silver, սպան. Plata, Թրք. Gümüş, հիւսկիւն, երբ. Zinn, գերմ. Silber, օրոք տարաձայն կը համարուին բաղադատմամբ ին. ձրպարս = արդիւրս, լատ. Argentum, իտ. Argento, գղ. Argent, բառերուն: Բացորոշ

կը տեսնուի թէ՛ մեր Արծաթ բառը՝ Հնչմամբ խիստ մերձաւոր է՝ ի վերջոյ յիշուած համա-Հնչակ և հոմանիշ բառերուն, որոնք եւս չեն նոյն ընտիր և լուսատեսիլ հանքին արմատական բառն, այլ գողցուած Հնագոյն Կեղտ. կամ Սանսկրիտ և կամ Զէնտ բառէն. և ըսածնուս անշուշտ զօրեղ ապացոյց մի կ'ըլլան Հետեւեալ տողերն:

Զէնտ լեզուով արծաթն կոչի օրօշատ, յն. ինչպէս ռախը, ձրպարս արդիւրս. ըստ Պիւս. Նուֆի կը կարծուի՝ թէ այս բառերն ունեցած են արմատական մը այլ արի, որ կը նշանակէ սպիտակ, և նաեւ սանսկրիտ լեզուի մէջ կը գտնուի արիւմա, այշառ, որ սպիտակ կը նշանակէ, և յունարէնի մէջ ձրպարս, արդոս = սպիտակ: Ուստի հաւանական կ'երեւի որ արծաթը սպիտակ ըլլալով, իւր անունն առած ըլլայ յիշեալ այլ (սպիտակ) արմատականէն [Նայա կարծեաց նպաստաւոր չէ՝ ինչ քիմիագիտաց՝ արծաթին յուսիմ ռախը, իբր սպիտակ լուսաւոր հանք մը]: Մոյն բառին նկատմամբ նմանօրինակ մեկնութիւն կու տայ լատ. ընդ. արծակ բառարանն իր (Lexicon Aegidii Forcellini. Prati, tipis aldinianis). ըստ այս հմտալից և հեղինակաւոր բառարանին, լատ. Argentum, որով է ին. ձրպարս հոմանիշ բառերն, ունեցած են իբրեւ իրենց արմատական՝ սանսկրիտ ալք ark բառը, որ փայլի կը նշանակէ, ուստի և arka արիւ. Գաղղիացի մեծ բառագէտն (Պէշլէ) ուրիշ մեկնութիւն կու տայ, և կը համարի թէ այս բառերուն արմատականն ըլլայ կեղտական. «Argent ét. celt., ar article; cand en composition gaud, blanc; d'ou en lat, argentum, և այլն»: Բայց մէկգիթ թողով այս բառի լատ. յն. կամ զաղղ. ստուգաբանութիւնն, մենք մեր արծաթ բառի ա.

նունակոչութեան վրայ ուշադրութիւննիս կեդրոնացընելով՝ որոշակի կը տեսնենք որ չէ փոխառեալ երբ. ܬܕܝ = քունֆ, փւնկ.

արամ. ասոր. ܬܕܝ KASPU, յն. ἀργυρος,

արար. ܬܕܝ = ֆըզզաղ, պարս. ڪاش = սիւմ, թըբ. ڪاش = կիսիւղ, լատ. Argentum, և այլն, բառերէ, այլ եթէ ներուի, կը համարուի թէ փոխառեալ և տառադարձեալ է գէնա հոմանիչ EREZATA բառէն, մեր ա, և կամ է տառերն լծորդ ըլլալով՝ նախնիք տոյն գէնա բառը փոխանակ է՛րի՛ԾԱԹ, ԱՐԾԱԹ տառադարձած են:

Հայկական, ինչպէս նաեւ օտար հին և նոր լեզուաց մէջ, Արծամը բառը գանազան ի մասաներով կը գործածուի: Նախ, յետ ոսկւոյ ընտրելագոյն և ազնուագոյն մետաղ. «Եւ այս է պտուղն զոր առնուցուր ի մոցամէ. ոսկի և արծամն և պղինձ...» Եղբ. ԼԻ. 3. — երկրորդ, իբր արծամթէ դրամ, որ Աստուծոյն հանձնչի մէջ շատ անգամ գործածուած է. «Եւ տայց ինձ զայլն կրկին, որ է ի վիճակի ագարակին իւրոյ, արծամնոյ՝ որչափ և արծամ իցէ...» Մենդ. ԻԳ. 9. — երրորդ՝ իբր արծամթեղէն սպաս, գարդ. «Իսկ եթէ որ արծաճ ընկնի իւրում արծամ կամ այլ ինչ կարտի զիւր յաւանդ...» Եղբ. ԻԲ. — չորրորդ՝ իբր բնիչ. «Վասնեաց արծամն ծառայեցուցից» . Նար, ԽԸ: Իբր դրամական չափ. «Լուայ թէ գետինն չորեքնարիւր տասնիւր արծամնոյ է...» : Մենդ. ԻԳ. 15: Իբր արձան. «Արծամն մոցա ամկեալ կայցէ» . Եղեկ Ե. 19. և մարգարէին այս տողը Փիւնի մեկնելով, արծամթ բառը՝ արձան կ'ենթադրէ. իբր Խորա- յէլաշուց այն ոսկին կամ արծամթէ արձանն երբը՝ զորս աստուծոյ տեղ կը պաշտէին: Անշուշտ յիշեալ հեղինակին նպատաւոր են Նայց. Բ. 20. հետեւեալ տողերն և... հանցէ մայր գարշելիս իւր՝ գարծամթեղէն և գոսկն-դէն, զոր արարին երկիր պագանել սնոստացն և յղկկամաց...» : Հմմտ. La Sainte Bible par M. l'abbé Trochon. Paris. Աստուածաշունչ մատենի մէջ՝ այս այլեւայլ իմաստն երբով արծամ բառը միշտ գրեթէ ամէն գլխակարգութեանց մէջ կը յիշուի. ըստ Խա. գէնա Վ. Աստուածատուրեանի Համաքարաւո հին և նոր կտակարանի (1895) Երուսղ. տպ. Ա. Յակոբեանց), երկու տարբ կտակարանաց մէջ՝ արծամ բառն 405 անգամ յիշուած է. բայց այլ աւելի յիշուած կը գտնենք՝ քանի որ Արքայաւմ նահապետին սկսեալ արծամթը դա- նապան գործածութիւններ ունէր, ԹԷ՝ իբր դրամ և ԹԷ իբր սպաս, և այլն: Զրհեղեղէն առաջ կը համարուի՝ թէ այս ազնիւ հանքը չէ գործածուած. վասն զի Մովսէս չիղեղէն

մեծ ողորմմէն առաջ պազմած զլուխներու մէջ արծամի գործածութեան յիշատակն ա. մենեւին չընեն, կը խօսի միայն ոսկւոյ, պղինձոյ, երկաթոյ, «Սմա զթովել, և էր ճարտարապետ դարբին՝ պղծոյ և երկաթոյ» . Մենդ. Դ. 22. և ուրիշ ազնիւ և թանկա- գին գոհարներու վրայ: Բայց Արքայաւմ նա- հապետի ատեն ծանօթ և ի վաճառս գործ- ածական մետաղ մը դարձած էր: Ս. Գիլգը կը գրէ, թէ այս նահապետը էր մեծատում յոյժ ամասնով և արծամով (Մենդ. ԺԳ. 2), և որ չորեքնարիւր աստիւղ արծամնոյ (անդ. ԻԳ. 15) երկիր մը կը գտէ, հոն Սառան թա- ղելու համար: Այս արծամթ ստակը դրամի ձեւով չէր գործածուեր, այլ գաւազանաձեւ կամ զանաձեւ (Հմմտ. Abbé Migne, Encyclopédie théologique, 1845):

### Արծամաքար

Նոր հանքարանութեան մէջ գործածուած է գղ. Argentite բառի համար, որ է զան- մնայց կարգէն մոխրագոյն և սակա ինչ փայ- լուն, արծամխարեր հանք մը: Այս բառին իբր հոմանիչ կը համարուի Արծամի փայլուկ, զոր Հ. Գ. Մենզիլեան գործածած է, բայց ընտրելագոյն կը թուի Արծամիւրար բառն, ինչպէս նաեւ յիշեալ բանասիրի երկին մէջ գործածուած կը տեսնենք:

### Արծուեքար

Նորակազմ բառ մը չէ, այլ վերջնադա- բեան նախնեաց ժամանակ գործածուած. գղ. կոչի Pierre d'Aigle և նաեւ Aélite. սը- կախառն գնդաձեւ երկաթ մ'է. հանքիս այս- պէս կոչուելուն՝ հետաքրքրական աւանդու- թիւն մը կը տեսնենք Պէշաէլի և մեր Հօր Գալուսէոյ Հանրագիտակ բառարաններու մէջ, իբր թէ Հոյն ատեն կը համարէին՝ որ արծինն այս հանքը իւր թեւոց տակ կը պահէր, որպէս զի անոր գօրութեամբ դիւրաւ ձու ածէ:

### Արմուխան

Անուն՝ անթափանցիկ, մոխրագոյն կորին- ղոնի. գղ. կոչի Spath adamantina. Հ. Մէ- նէվիլեան այս հանքը կը կոչէ Հասարակ կողունը. իսկ Արմուխան, որ անշուշտ աւելի ներդաշնակ և համառօտ կը տեսնուի, է տա- ռադարձութիւն իտ. Armofano բառին՝ որուն հոմանիչ է Spato adamantino. (Հմմտ. Նոր հանքարանութիւն. Վենետիկ 1898):

Շաքսյայարեչի

Հ. ՄԻՄՈՆ ԵՐԵՄԵԱՆ